

26. Արտոնագրային գործունեություն*

2003թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների) իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը.

26.1. Գյուտեր և օգտակար մոդելներ: 2003թ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 155 գյուտի և 6 օգտակար մոդելի հայտ, որոնցից 156-ը՝ ազգային, 5-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Գործակալության գործունեության ընթացքում՝ 1992թ-ից մինչև 2003թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 1980: 2003թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 2002թ. համեմատ նվազել է 27.1%-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից՝ 37.5%-ով: Օտարերկրյա հայտատուներից ստացված 5 հայտերից 2-ը ներկայացվել է արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի շրջանակում: 2003թ. ազգային հայտատուների կողմից ներկայացված գյուտերի միջազգային հայտերի քանակը նվազել է 1-ով և կազմել 3: 1994-2003թթ. ընթացքում մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն է ուղարկվել 34 գյուտի հայտ:

190 հայտերով անցկացվել է փորձաքննություն, ընդ որում, 7 հայտերով՝ ըստ ելային փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ 20 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին: 145 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ 10 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին: 8 հայտերով անցկացվել է փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին: 3 հայտով որոշումներ են ընդունվել արտոնագիր տալը մերժելու մասին, 20 հայտով՝ հայտի հետ կանչման մասին:

26.2. Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ: 2003թ. ազգային ընթացակարգով ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 927 հայտ, որից 692-ը կամ 74.6%-ը՝ ազգային հայտատուներից: 2002թ. համեմատ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 78.3%-ով: Օտարերկրյա իրավաբանական անձանցից ստացված հայտերի քանակը ՀՀ ազգային ընթացակարգով ավելացել է 1.3%-ով, իսկ Մադրիդյան համաձայնագրի շրջանակում նվազել է 1.5%-ով և կազմել համապատասխանաբար՝ 235 և 1411:

725 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում բոլոր հայտերն ընդունվել են քննարկման: Հայտատուների կողմից հետ է կանչվել 32 հայտ, իսկ 51 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում: Գրանցվել են ապրանքային և սպասարկման 602 նշաններ:

2003թ. դեկտեմբերի 6-ի դրությամբ, նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի շրջանակում ՀՀ նշաններ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1411 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 426, իսկ վերջնական մերժման մասին՝ 317 միջազգային գրանցումներով:

* Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալությունը:

2003թ. ստացվել է ապրանքի ծագման տեղանվան 1 հայտ:

2003թ. գործակալություն է ներկայացվել 23 արդյունաբերական մոնոլի հայտ, որից 6-ը՝ ազգային հայտատուներից, 17-ը՝ օտարերկրյա:

26.3. Ֆիրմային անվանումներ: 2003թ. գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3194 հայտ: Գրանցվել է 3050 անվանում, մերժվել է 144-ը: Ֆիրմային անվանման մեջ «հայ», «Հայաստան», «հայկական» բառերի և դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 11 թույլտվություն:

26.4. Ուղղորդի վերաբերող հրապարակումներ: 2003թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի թվով 4 համար: Տեղեկագրերը հրատարակվել են հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 169 գյուտի, 7 օգտակար մոդելի, 12 արդյունաբերական մոնոլի արտոնագրերի, 401 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին: Գյուտի հայտի պաշտոնական հրապարակման և համընդհանուր ծանոթացման նպատակով տպագրվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի թվով 12 համար:

26.5. Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2003թ. ընթացքում քննարկվել և գրանցվել է 68 պայմանագիր, որից 53-ը՝ ապրանքային նշանների զիջման, 14-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 1-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին: Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջև:

26.6. Ֆինանսական ցուցանիշներ: 2003թ., որպես պետական տուրք, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 147.6 մլն. դրամ (նախատեսված է եղել 159.3 մլն. դրամ), որի 65.3%-ը (96.5 մլն. դրամ)՝ ապրանքային նշանների և արդյունաբերական մոնոլների իրավական պահպանության գծով, 15.9%-ը (23.4 մլն. դրամ)՝ ֆիրմային անվանումների իրավական պահպանության, 3.8%-ը (5.5 մլն. դրամ)՝ գյուտերի և օգտակար մոդելների իրավական պահպանության գծով, 10.1%-ը (14.9 մլն. դրամ)՝ պետական գրանցամատյանների վարման, 3.9%-ը (5.8 մլն. դրամ)՝ զիջման մասին և լիցենզային պայմանագրերի գրանցման, 0.9%-ը (1.3 մլն. դրամ)՝ գանգատների քննարկման և 0.1%-ը (0.2 մլն. դրամ)՝ այլ գործողությունների գծով:

2002թ. համեմատ գանձված գումարների չափն ավելացել է 6.2%-ով:

Արտոնագրային գործունեության ցուցանիշները, 2001-2003թթ.

		(միավոր)		
		2001	2002	2003
Ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը		168	222	161
Արդյունաբերական մոնոլների ներկայացված հայտերի քանակը		2	15	23
Ապրանքային նշանների ներկայացված հայտերի քանակը		806	620	927
Ֆիրմային անվանումների ներկայացված հայտերի քանակը		4687	3105	3194
Տրվել է	գյուտի արտոնագիր	200	152	169
	օգտակար մոդելի արտոնագիր	10	19	7
	արդյունաբերական մոնոլի արտոնագիր	4	10	12
	ապրանքային նշանի վկայական	759	654	602